



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐՄԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«04» 10 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 84

Ձեռնարկողը՝

«Կապպեր Պլաս» ՍՊԸ

Ք. Երևան, Այգեստան 9 փող. փուն 45

Գործունեությունը՝

**Սարիքար-Կուրականի բազմամեդաղների հանքերևակման
տեղամասում 2017-2020թթ ընթացքում որոնողական
աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

«Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 7թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 84

'04' '10' 2017թ.

Սարիքար-Կուտականի բազամետաղների հանքերնակման տեղամասում 2017-2020թթ. ընթացքում որոնողական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝ <<Կապպեր Պլաս>> ՍՊԸ
Նախագծող՝ <<Կապպեր Պլաս >> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
<Գ> կատեգորիա
Տեղադրման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ


Սարիքար-Կուտականի բազամետաղների հանքերնակման տեղամասում 2017-2020թ.թ. ընթացքում որոնողական աշխատանքների կատարման ծրագիրը կազմված է <<Կապպեր Պլաս>> ՍՊ ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով, նպատակ ունենալով երևակման սահմաններում կատարված աշխատանքների արդյունքներով հայտնաբերել հանքայնացված տեղամասեր, ճշգրտել և լրացնել հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքի, հանքամարմինների ձևաբանության ու տեղադրման տարրերի, օգտակար հանածոյի նյութական կազմի, որակի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև տալ վերջինիս հեռանկարային գնահատականը և հիմնավորել մանրազննին հետախուզական աշխատանքների նպատակահարմարությունը:

Որոնողական աշխատանքները կիրականացվեն վերգետնյա՝ մինչև 4.0մ խորությամբ լեռնային փորվածքների, սյունակային խորքային հորատանցքերի, որոնողահանույթային երթուղիների միջոցով, նմուշարկման գուգորդմամբ, նպատակ ունենալով տալ օգտակար հանածոյի որակական ու քանակական գնահատականը ոսկու և դրանց ուղեկից բազամետաղների ռեսուրսների վերաբերյալ:

Կկատարվեն լաբորատոր հետազոտություններ, ինչպես նաև երկրաբանական, երկրաքիմիական և տոպոգրաֆիական հանույթային աշխատանքներ, միաժամանակ կառանձնացվեն հանքային դաշտի հեռանկարային տեղամասեր, հետազայում մանրակրկիտ հետախուզում կատարելու և գնահատելու համար:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարիքար-Կուտականի բազամետաղների երևակումը տեղակայված է հանրապետության արևելյան հատվածում՝ Սևանա լճի ավազանի հյուսիս-արևելյան մասում, Սևանի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջին և ձգվում է Շիշգյունեյ լեռան հարավային լանջերից դեպի հյուսիս-արևմուտք մինչև Դարա գետի վերին հոսանքի ավազանը:

Հանքերնակման տարածքը ընդհանուր առմամբ զբաղեցնում է շուրջ 129.6կմ² մակերես և տեղակայված է 2250.0-3100.0մ բացարձակ բարձրությունների վրա:



Տարածաշրջանը հարում է Հայկական հրաբխային թափանցանալի տեկտոն ահրաբխային լեռնազանգվածների Արագած-Սյունիքի ենթազոնայի կենտրոնական մասին՝ Վարդենիսի լեռնաշղթային, որը 3000.0-3500.0մ առավելագույն թափանցանալի վահանաձև լեռնային համակարգ է, որի լեռնավահանում զգալի տարածում ունեն ռելիեֆի լեռկացման ձևերը, ամրագիծն, ամրագիծն-ողողամաշման դարավանդները, հին հարթեցման մակերևույթների մնացորդները, պլեյստոցենյան սառցապատումների հետքերը: Տեղամասի մակերևույթը հիմնականում լեռնոտ է՝ հանգած հրաբխային կոների (Վարդենիս՝ 3522.0մ, Սանդուխտսար՝ 3554.0մ և այլն), լեռնավահանների և նրանց միջև ընկած սարավանդների և գոգավորությունների գուգակցությամբ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը պարզ է և ներկայացված է մինչքեմբրի-պալեոզոյի հասակի բյուրեղային թերթաքարերով, որոնց վրա տեղադրված են վերին կավճի հասակի հրաբխանստվածքային ապարները, մինչսենոնի և վերին երրորդական հասակի ինտրուզիվ ապարները: Տեղամասում հանդես են գալիս ստորին-վերին սենոնի հասակի ապարները, որոնք ներկայացված են մարմարացված կրաքարերի մոտ 1200.0մ հզորությամբ շերտախմբով, տուֆակոնգլոմերատներով, տուֆափշրաքարերով, տուֆաավազաքարերով: Ուսումնասիրվող տեղամասում լայն տարածում ունեն վերին կավճի և երրորդական հասակի հիմքային և գերհիմքային ինտրուզիվ ապարները: Դրանք ներկայացված են հիպերբազիտներով և գաբրոիդներով: Հիպերբազիտների հետ տարածական սերտ կապի մեջ են գաբրոիդային ապարները: Գաբրո-հիպերբազիտային զանգվածի մեծ մասը բաղկացած է տարբեր աստիճանի սերպենտինացված դունիտներից և սերպենտինիտներից: Տեղամասում լայն տարածում ունեն նաև հիդրոթերմալ փոփոխված ապարները, որոնք կապված են տեկտոնական խախտումների, ապարների ջարդրտվածության հետ: Վարնետքային տիպի խախտումների հետ կապված են 20.0մ հզորություն ունեցող լիստվենիտների ձգված շերտերը: Լիստվենիտները սովորաբար տեղադրված են գերհիմքային ապարների ու կրաքարերի հպումային գոտիներում, երբեմն էլ նրանց սահմաններից դուրս՝ Լոցենի հրաբխածին-նստվածքային առաջացումներում՝ 40.0-50.0մ լայնությամբ (երբեմն մինչև 150.0մ) և մինչև 1.0կմ և ավելի երկարության ուղղաձիգ և աղեղանման ժայռային ելքերով, որոնք առանձնանում են իրենց բնորոշ գորշ դեղնավուն, սրճի, օխրայի գույներով և դունիտների ու պերիդոտիտների ֆոնի վրա ցցված ռելիեֆի ձևերով:

Աշխատանքների նպատակն է կատարել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ 3 փուլով՝ հետազոտել հանքերևակման սահմաններում հայտնաբերած արդյունաբերական նշանակություն ունեցող հանքային մարմինները, բնութագրել դրանց տեղադիրքը, ճշգրտել վերջիններիս տարածական պարամետրերը, բնութագրել դրանց նյութական կազմը: Կատարել տեղամասում հայտնաբերած մետաղների նախնական գնահատում արդյունաբերական C₁ կարգով և հաշվարկել դրանց կանխատեսումային ռեսուրսները P₁ կարգով, իսկ հանքավայրի ստորին հորիզոնների համար կատարել օգտակար հանածոյի պաշարների հաշվարկ C₁ կարգով: Տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքներն ամփոփել մանրագնին կոնդիցիանների պարամետրերի տեխնիկատնտեսական հիմնավորմամբ ու պաշարների հաշվարկմամբ երկրաբանական հաշվետվությունում:

Նախատեսվող աշխատանքների մեթոդիկայի ու միջոցների ընտրությունը կատարելիս հաշվի է առնվել տեղամասի տեղադրվածությունը, երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, տեղանքի ռելիեֆի ձևը և տարածքի չափսերը, հետախուզությունը նախատեսվում է կատարել մեխանիկական սյունակային հորատման, հետախուզաառուների, հետախուզահորերի և նմուշարկման միջոցով: Ներկայացվող ծրագրի նպատակն է գնահատել տեղամասում պղնձի և մոլիբդենի պաշարները, հանքայնացման տեսակետից առանձնացնել հեռանկարային տեղամասեր, հետախուզել և գնահատել այդ տեղամասերում մետաղների և հանքաքարի պաշարներն ըստ C₁ կարգերի,

իսկ կանխատեսումային պաշարները գնահատել ըստ P₁ կարգի: Տեղամասում կիրականացվեն երկրաբանական, երկրաքիմիական, երկրաբանահանույթային աշխատանքներ:

Աշխատանքների կատարման ժամկետների սկիզբը նախատեսվում է 2017թ-ի III-րդ եռամսյակին և ավարտվելու է՝ 2020թ.-ի II-րդ եռամսյակին:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տարածքը զբաղեցնում է շուրջ 12960.0հա մակերես:

Հետախուզվող տարածքում առանձնացված առանձին տեղամասերի 1:5000 և 1:10000 մասշտաբների վերջնական երկրաբանական քարտեզների կազման, առկա ռեսուրսների եզրագծաման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթային աշխատանքներ 12960.0հա /129.6կմ²/ մակերեսի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Սարիքար-Կուտականի բազմամետաղների հանքերակման տեղամասում նախատեսվում է կատարել 1:2000 և 1:10000 մասշտաբների որոնողական երթուղիներ վերջինիս երկրաբանական կառուցվածքի և սահմանների ճշտման, հանքային գոտիների հայտնաբերման համար:

Ծրագրով նախատեսվում է անցնել 78.0կմ երթուղիներ /58.0կմ-ը 2000 մասշտաբի և 20.0կմ-ը 10000 մասշտաբի/:

Հետախուզվող տեղամասում հանքային գոտին խորքային հորիզոնների հետախուզման և գնահատման նպատակով նախատեսվում է հորատել 16 հորատանցք մինչև 50.0-120.0մ խորությամբ՝ 1480զծ.մ ընդհանուր ծավալով, այդ թվում՝ Դարանակ համայնքում 1 հորատանցք՝ 75 զծ.մ; Արեգունի համայնքում 2 հորատանցք՝ ընդամենը 175զծ.մ, Գեղամասար համայնքում 2 հորատանցք՝ ընդամենը 220զծ.մ; Ավազան համայնքում 2 հորատանցք՝ ընդամենը 195զծ.մ; Արփունք համայնքում 2 հորատանցք՝ ընդամենը 155զծ.մ; Կախակն համայնքում 2 հորատանցք՝ ընդամենը 190զծ.մ; Կուտական համայնքում 3 հորատանցք՝ ընդամենը 260զծ.մ; Տրետուկ համայնքում 1 հորատանցք՝ 100զծ.մ; Սոթք համայնքում 1 հորատանցք՝ 110զծ.մ:

Հանքային գոտիների հորատահանուկի զծային ելքը պետք է կազմի ոչ պակաս քան 98%: Որպես լվացման հեղուկ կիրառվելու է կավային և պոլիմերային լուծույթները:

Ծրագրով նախատեսվում է վերգետնյա փորվածքների հետախուզահորերի, հետախուզաառուների անցում: Փորվածքները միմյանց հետ կապակցված չեն: Դրանց տեղը և դիրքը կճշտվի դաշտային աշխատանքների ժամանակ, տեղում, երկրաբանական երթուղիների ընթացքում:

Հանքային մարմինների և գոտիների հզորությունը, տարածումը, դրանց հանքայնացման համասեռությունը, տարածման և բաշխման օրինաչափությունները, այլուվիալ-դեյուվիալ նստվածքների ուսումնասիրման, ինչպես նաև մարմինների մորֆոլոգիան պարզելու և հանքային գոտիների թափանցանքի համար նախատեսվում է հետախուզաառուների անցում: Հետախուզաառուների խորությունը նախատեսվում է ընդունել 2.0մ, լայնությունը՝ 0.85մ (եկնելով հողաբուսական շերտի և հանքային մարմնի հզորությունից):

Հետախուզաառուների նախատեսվում է անցնել հիմնականում ապարների կոնտակտային մասերում: Նախատեսվում է միմյանցից 250.0-600.0մ հետավորության վրա անցնել 25 մագիստրալ առու, ընդհանուրը 2215զծ.մ կամ 3765.5մ³ ընդհանուր ծավալով, այդ թվում՝

- Արեգունի համայնքում 3 առու ընդամենը 250զծ.մ, մակերեսը՝ 212.5մ²,
- Գեղամասար համայնքում 5 առու ընդամենը 445զծ.մ, մակերեսը՝ 378.25մ²,
- Ավազան համայնքում 3 առու ընդամենը 275զծ.մ, մակերեսը՝ 233.75մ²,
- Արփունք համայնքում 4 առու ընդամենը 350զծ.մ, մակերեսը՝ 297.5մ²,
- Կախակն համայնքում 4 առու ընդամենը 335զծ.մ, մակերեսը՝ 284.75մ²,

- Կուտակյան համայնքում 3 առու ընդամենը 360գծ.մ, մակերեսը՝ 306.0մ²,
- Տրեստուկ համայնքում 1 առու 90գծ.մ, մակերեսը՝ 76.5մ²,
- Սոթք համայնքում 1 առու 110գծ.մ, մակերեսը՝ 93.5մ²:

Առուների ամբողջ ծավալի 1035.5մ³-ը նախատեսվում է անցնել /ժամանակակից փուխր բեկորային առաջացումների 0.55մ միջին հզորության պայմաններում/ IV կարգի ապարներով, իսկ 2730.0մ³ VII և VIII կարգի ապարներով:

Նախատեսվում է անցնել 3 մաքրվածք ընդհանուր 75.0մ³ ընդհանուր ծավալով: Մաքրվածքների լայնությունը ընդունվում է 3.0-4.0մ, կից պատի բարձրությունը 1.0-1.5մ: Մաքրվածքների անցումը նախատեսվում է իրականացնել ձեռքով, քանի որ տեղամասում ըստ նախնական ուսումնասիրությունների տվյալների, այլուվիալ-դեյուվիալ, փուխր բեկորային, ճեղքավորված, դրեսվայի վերածված ապարների հզորությունը տատանվում է 0.56-8.0մ սահմաններում, իսկ երբեմն՝ 8.5մ:

Նախատեսվում է անցնել 68 հատ հետախուզահոր, յուրաքանչյուրը 3.5մ խորությամբ, ընդհանուր 238գծ.մ, որից IV կարգի ապարներում՝ 37գծ.մ, իսկ VI - VIII կարգի ապարներում 201 գծ.մ: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 102մ², ամբողջ ծավալը՝ 357.0մ³:

Անցած հետախուզահորերը և առուները, համաձայն անվտանգության տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանության կանոնների, փաստագրումից և նմուշարկումից հետո ենթակա են վերականգնման ամբողջ 4122.5մ³ ծավալով, այդ թվում հետախուզատուներ - 3765.5մ³, հետախուզահորեր - 357.0մ³:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները, հորատահանուկը: Նախատեսվում է իրականացնել հետախուզական փորվածքների տեղադիրքի կապակցում, մակերևույթի թեքության անկյան և ազիմուտի չափում: Կատարվելու է մերկացված ապարների ուսումնասիրություն, նմուշների վերցնում, դրանց պիտակավորում և փաթեթավորում, լեռնային փորվածքների նկարագրում՝ նմուշարկման միջակայքերի նշմամբ:


Մշակման ենթակա են ակոսային, հորատահանուկի և համախառն նմուշների ամբողջ քանակը, համաձայն որի ակոսային նմուշներ - 245, այդ թվում հսկողական /համակցված/- 82, հորատահանուկային - 490, սղկվածքային նմուշներ - 18, քերծվածքային - 21, խմբակային - 40, ֆազային - 13, ընդամենը - 662 նմուշ: Նմուշների մշակման աշխատանքների կատարման որակը և ճշտությունը ապահովելու համար նախատեսվում է աշխատանքային բոլոր փուլերում իրագործել վերահսկման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կատարել լաբորատոր, միներալոգիական և պետրոգրաֆիական ուսումնասիրություններ, քիմիական և սպեկտրիալ անալիզներ: Հարգային անալիզների ենթակա են բոլոր 1184 նմուշները: Հաշվի առնելով դրանց արտաքին և ներքին հսկողական անալիզների քանակը (5%), ապա հարգային անալիզների ընդհանուր քանակը կկազմի 695 նմուշ:

Հանքաքարի նյութական կազմը և նրա տեխնոլոգիական հատկությունները հետազոտելու նպատակով հետախուզահորերից նախատեսվում է 5 տեխնոլոգիական նմուշի հանույթ, որոնք հետազոտվելու են <<Լեռնամետալուրգիայի ինստիտուտի լաբորատորիայում>>, որի հիման վրա կներկայացվի հանքաքարի տեխնոլոգիական մշակման սխեման: Այդ նմուշներից 3-ը կկազմվեն շաքային խառը նմուշներից, իսկ 2-ը հորատահանուկներից: Նախատեսվում է այն փորձարկել գործարանային պայմաններում 5 տեխնոլոգիական նմուշների փորձարկում՝ ընդհանուր 1000.0տ ծավալով:

Հանքային դաշտում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ:

Նախատեսվում է 16 հորատման հրապարակների՝ յուրաքանչյուրը 45.0մ² մակերեսով, և դրանց մոտեցման ճանապարհների նորոգում 3825.0մ³ ծավալով՝ շուրջ 8.5կմ երկարությամբ, միջինը 1.5մ լայնությամբ՝ 4-րդ կարգի ապարներում:



Ընդերքի ուսումնասիրման աշխատանքները անմիջականորեն կապված են շրջակա միջավայրի պահպանման խնդիրների հետ: Որոնողական աշխատանքների իրականացումը շրջակա միջավայրի վրա կունենա որոշակի ազդեցություն և այդ ազդեցությունը նվազեցնելու կամ բացառելու նպատակով կկիրառվեն բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- պարբերաբար կհսկվեն մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա, նկատի ունենալով, որ օդում փոշու սանիտարական նորման չպետք է գերազանցի 0,004գ փոշի օդի 1մ³-ում;

- փոշեգրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կկատարվի ջրցանում;

- օգտագործվող ագրեգատները կաշխատեցվեն սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 27.09.2017թ. ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նիստի N 7-փ/17 արձանագրությամբ ներկայացված որոշման և 27.09.2017թ. Վարդենիսի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների արդյունքները, ինչպես նաև փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Որոնողահետախուզական աշխատանքների իրականացման համար ընտրված տեղամասը զբաղեցնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի մոտ 129.6կմ² /12960.0հա/ տարածք և ընդգրկելով Դարանակ /103.8հա/, Արեգունի /1004.6հա/, Գեղամասար /1262.0հա/, Ավազան /1262.0հա/, Արփունք /1934.7հա/, Կախակն /2658.5հա/, Կուտական /3475.0հա/, Տրետուկ /1154.7հա/ և Սոթք /471.9հա/ համայնքների վարչական տարածքները:

27.09.2017թ. Վարդենիսի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների ժամանակ հանրության կողմից հնչեցին դրական կարծիքներ և հավանություն նախատեսվող գործունեության վերաբերյալ: Նշվեց նաև, որ ըստ նախնական գնահատման հայտի նախատեսվում է նշված տարածքում իրականացնել միայն երկրաբանահետախուզական աշխատանքներ: Հետագա հանքի շահագործման աշխատանքները կիրականացվի երկրաբանահետախուզական աշխատանքների դրական արդյունքների և հաստատված պաշարների հիման վրա համապատասխան նախագծային փաստաթղթերի կազմումից հետո, որը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փորձաքննության կենթարկվի երկու փուլով՝ որպես Ա կատեգորիայի նախատեսվող գործունեություն:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հետախուզաառուների, հետախուզահորերի և խրամների, հողային զանգվածների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման, շինարարական տեխնիկայի տեղաշարժման ժամանակ կառաջանան անօրգանական փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շարժիչների աշխատանքի արդյունքում կառաջանան դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, որոնք կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից: Բացառվում է ջրային ավազանի աղտոտումը:

Աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ է հետևել բնապահպանական միջոցառումների կիրառմանը, որոնք ընդգրկում են հետևյալ հարցերը.

- օդային ավազանի պահպանումը վնասակար արտանետումներից ջրցանման և աշխատանքներում սարքին մեքենասարքավորումների օգտագործմամբ;

- ջրային ավազանի պահպանումը կեղտոտումից՝ հորատման ժամանակ օգտագործվող ջրերը հատուկ կահավորված փոսորակներում հավաքմամբ և կրկին օգտագործմամբ, բացառելով ջրերի արտահոսքը;

- ապահովել լանդշաֆտների վերականգնման աշխատանքները՝ կատարելով խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա;

- հողերի պահպանության կարգի պահանջների ապահովում;
- կանխարգելել կամ մեղմացնել էկոհամակարգերի վրա մարդածին բացասական ազդեցության գործոնը;
- աշխատանքների հետևանքով բնությանը հասցված բացասական ազդեցությունների վերացում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզաառուների, հետախուզահորերի, հորատահարթակների կառուցման և ճանապարհների վերականգնման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է ելնելով հետախուզաառուների, հետախուզահորերի տարածքի մակերեսից և հողաբուսաշերտի 0.30մ վերականգնման պայմանից: Հետախուզաառուների, հետախուզահորերի և հորատման հրապարակների ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 2705.0մ², որտեղ հողաբուսական ծածկ առկա է միայն 54% մակերեսում: Ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կազմում է՝ 438.0մ³, որը կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 405000.0դրամ, այդ թվում հորատհրապարակների համար՝ 35000.0դրամ, հետախուզաառուների՝ 350000.0դրամ և հետախուզահորերի՝ 2000.0դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 2705.0մ² կամ 0.27հա: Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքներին կկազմի՝ 67.5 հազ.դրամ:

Քանի, որ ուսումնասիրվող տարածքը հանդիսանում է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտու տարածք, ուստի որոնողահետախուզական աշխատանքները անհրաժեշտ է իրականացել հաշվի առնելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի և «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Օրագրով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, որոնք անհրաժեշտության դեպքում մասնակիորեն կվերանորոգվեն:

Նախնական գնահատման հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը: Նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Նշեմ նաև, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի հոդված 20-ի 7-րդ կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ (մասնավորապես՝ սեփականաշնորհված, անտառային, գյուղնշանակության հողատարածքներում աշխատելու նպատակով):
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումներին

և սոցալ-տնտեսական ծրագրին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

3. Որոնողահետախուզական աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառման նպատակով անհրաժեշտ է ուղղորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ, «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և ՀՀ կառավարության N 57-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 20-ի N 64-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով, իսկ անտառային հողերում՝ ՀՀ կառավարության N 1045-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի կուտակումն և հեռացումն (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կապպեր Պլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Սարիքար-Կուտականի բազմամետաղների հանքերնական տեղամասում 2017-2020թթ. ընթացքում որոնողական աշխատանքների» շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլ. մասնագետ



Կ. Մովսիսյան